

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

2014 Թ.-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

I. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի հաշվետվությունը համալսարանի 2012-2013 ուսումնական տարվա գործունեության և ԳՊՀ 2013 թվականի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ և ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 15-րդ կետի դ) ենթակետով՝

ԳՊՀ խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Գավառի պետական համալսարանի 2012-2013 ուսումնական տարվա գործունեության և ԳՊՀ 2013 թվականի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
2. Գավառի պետական համալսարանի 2012-2013 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

II. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի հաշվետվությունը՝ համալսարանի 2013 թվականի ֆինանսական տարվա գործունեության վերաբերյալ՝ ԳՊՀ խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի 2013 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը:

III. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի զեկուցումը ԳՊՀ 2014 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվի վերաբերյալ՝ ԳՊՀ խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի 2014 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ ԳՊՀ բյուջեն:
2. Հանձնարարել ԳՊՀ ռեկտորին՝ 2014 թվականի ծախսերը կատարել հաստատված բյուջեին համապատասխան:

Խորհրդի նախագահ՝

Հ. Հ. Հակոբյան